

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ԻՐԻՆԱ ՎՈԼՈՂՅԱՅԻ

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԱՐՑԱԽԻ  
ԳԵՏԱՇԵՆԻ ԵՆԹԱՇՐՋԱՆՈՒՄ  
(1988-1991 թթ. նայիս)

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական  
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ-2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Աբրահամյան Յ.Բ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Աբրահամյան Յ.Մ.

պատմական գիտությունների թեկնածու  
Բալայան Ս.Կ.

Առաջատար կազմակերպություն՝

Վանաձորի Հովհ. Թումանյանի  
անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թ. մայիսի 19-ին, ժամը 14<sup>00</sup>-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. ապրիլի 15-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝  
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մուրադյան Հ. Ղ.

## ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** Արցախյան ազատագրական պայքարն արդրեջանական կողմի պարտադրանքով զինված հակամարտության վերածվելու նախադրյալների բազմակողմանի ուսումնասիրությունը, արցախահայության հերոսական պայքարին գործուն մասնակցություն ունեցած ինքնապաշտպանական կամավորական ջոկատների գործունեությունը, նրանց հաղթանակների ու պարտությունների օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների գիտական հետազոտությունը հայ պատմագրության կարևոր խնդիրներից են: Թեման արդիական մեծ հնչեղություն ու կարևորություն ունի, այն գիտական հիմքերի վրա դնելը և ողջ ճշմարտությունը հանրամատչելի դարձնելը պատմագիտական անհրաժեշտություն, քանի որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում ընդհատակում ինքնակազմակերպված պաշտպանական ուժերի մասին ո՞չ է բոլոր փաստերն են հրապարակված:

1988-1991 թվականների իրադարձությունների խորը վերլուծությունը ցույց է տալիս, որ Խորհրդային Ադրբեջանը հետևողականորեն կիրառելով հայկական պատմական տարածքների բռնազավթման և ցեղասպանական քաղաքականություն, բռնությամբ տեղահանելով հայ բնակչությանն իր բնօրրանից՝ տիրացել է Հյուսիսային Արցախին: Հետազոտության արդիականությունը և հրատապությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հայ-ադրբեջանական հակամարտությունը դեռևս գտնվում է կարգավորման փուլում, իսկ հակառակորդն, ինքը լինելով գավթիչը, կեղծելով պատմական անվիճելի փաստերը, շարունակում է անհիմն վիճարկել ազատագրված հայկական տարածքների պատկանելության հարցը, հանդես գալիս պատերազմը վերսկսելու ռազմաշունչ հայտարարություններով ու գործողություններով, բազմիցս խախտելով հրադադարի ռեժիմը և հայ-ադրբեջանական հակամարտության խաղաղ կարգավորման միջազգային ձևաչափը: Խորհրդա-ադրբեջանական «Օղակ» ռազմական գործողությամբ հայ-ադրբեջանական հակամարտությունը վերաճեց պատերազմի, բացահայտելով ընդհատակում գործող ինքնապաշտպանական կամավորական ջոկատների միայն որոշ գործողությունները: Այս փուլի շատ հարցեր դեռևս ինչպես հարկն է չեն ուսումնասիրվել:

1988-1991 թթ. ՀՀ և ԼՂՀ պաշտպանության բանակի հիմքերը՝ տարերայնորեն գործող ինքնապաշտպանական ջոկատները կազմավորվում և գործում էին ինքնաբուխ, հայ ժողովրդին պարտադրված չհայտարարված պատերազմի պայմաններում ներդնելով անհավանական ջանքեր ազգային պետականության, սահմանների անձեռնմխելիության, ազգային անվտանգության պահպանման ուղղությամբ, հատկապես, զինված հակամարտության թեժ կետերում, որոնցից գերլարվածը Գետաշենի ենթաշրջանի տարածքն էր, որտեղից և տրվեց հերոսության մեկնարկը դեպի ապագա հաղթանակներ:

**Ատենախոսության նպատակն ու խնդիրները:** Ձեռնարկելով սույն աշխատանքը, նպատակ ենք հետապնդել ամբողջացնել Գետաշենի ենթաշրջանում ազատագրական պայքարի պատմությունը, վեր հանել ինքնապաշտպանական ջոկատների կազմավորման, ընդհատակյա զինված պայքարի տակավին անհայտ էջերը, նոր փաստերով լրացնել թեմային առնչվող առկա ուսումնասիրությունները, մոռացությունից փրկել հիշատակության արժանի սխրանքները:

Ատենախոսության շրջանակում աշխատել ենք լուծել հետևյալ խնդիրները. ա) ի մի բերել Գետաշենի ենթաշրջանում ազգային-ազատագրական պայքարի քառամյա պատմությունը, բ) ամփոփ կերպով գիտական շրջանառության մեջ դնել Հայաստանի ազգային հերոս, «Հայրենիքի» բարձրագույն շքանշանի ասպետ,

Գետաշենի ենթաշրջանի ինքնապաշտպանության ընդհանուր հրամանատար Թաթուլ Կրպեյանի հասարակական-քաղաքական գործունեությունը լուսաբանող փաստաթղթերը, որոնք կլրացնեն քննարկվող ժամանակահատվածում թեմայի վերաբերյալ պատմագիտական ուսումնասիրությունները, մասնավորապես կամավորական ջոկատների կազմավորման, ինքնապաշտպանության կազմակերպման, մարտական գործողությունների ընթացքը լուսաբանելու հարցերում, գ) վերլուծել Գետաշենի ենթաշրջանի անկման պատճառները, դ) ցույց տալ Գետաշենի ենթաշրջանի ինքնապաշտպանության դասերը, ղ) շտկել թեմային առնչվող և շրջանառվող մի շարք անճշտություններ:

**Յետազոտության մեթոդաբանական հիմքը:** Թեմայի հետազոտության համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել գիտականության, համակարգման և պատմականության սկզբունքները, որոնց շնորհիվ հնարավոր է ուսումնասիրել պատմական գործընթացները զարգացման և փոխկապակցվածության մեջ, ինչպես նաև կատարել փաստերի բազմակողմանի վերլուծություն ու գնահատում:

Ատենախոսության հիմքում ընկած պատմահամեմատական և վերլուծական մեթոդներով բազմակողմանիորեն, մանրակրկիտ հետազոտման են ենթարկվել քննարկվող հիմնահարցերը: Ատենախոսությունը գրված է անաչառ, անկողմնակալ մոտեցմամբ և պատմական ճշմարտության գերակայությամբ: Ուսումնասիրությունը կատարվել է պատճառների և հետևանքների համագամակից քննությամբ:

**Պատկան նորույթը:** Սույն թեկնածուական աշխատանքում գիտական նորույթն այն է, որ առաջին անգամ հրապարակվող արխիվային փաստաթղթերի հիման վրա քննարկվող թեման ներկայացվում է նորովի: Չնայած որ հայ-ադրբեջանական հակամարտության մասին ընդհանրապես, իսկ արցախյան ազատագրական պատերազմի մասին, մասնավորապես, գրվել են աշխատություններ և հոդվածներ, սակայն առկա գրականության ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդելու, որ այս թեման պատմագիտական համակողմանի հետազոտության առարկա չի դարձել: Մեր հետազոտությամբ առաջին անգամ փորձ է արվում համակողմանիորեն վեր հանել ազգային-ազատագրական պայքարի վերելքը և իրադարձությունների ընթացքը Յուևիսային Արցախի Գետաշենի ենթաշրջանում, ներկայացնել ինքնապաշտպանության կազմակերպման առանձնահատկությունները և Ֆիդայական-կամավորական ջոկատների կազմավորման պատմությունը, նորահայտ փաստերով տալ «Օղակ» ռազմական գործողության համակողմանի գնահատականը: Թեմային առնչվող բազմաթիվ փաստեր և աղբյուրներ մեր կողմից առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ:

**Յետազոտության ժամանակագրական սահմանները:** Ժամանակագրական առումով հետազոտությունն ընդգրկում է 1988 թվականից մինչև 1991 թվականի գարուն ընկած ժամանակահատվածը, որը պայմանականորեն բաժանել ենք երկու շրջանի. 1) 1988-1990 թթ. օգոստոս, 2) 1990 թ. սեպտեմբեր-1991 թ. մայիս՝ նկատի ունենալով Գետաշենի ենթաշրջանում Թաթուլ Կրպեյանի կողմից կազմակերպված 8-ամսյա ինքնապաշտպանությունը:

**Ատենախոսության գործնական փորձաքննությունը:** Ատենախոսությունը քննարկվել ու հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի կողմից: Ուսումնասիրության հիմնական դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած հոդվածներում:

**Ատենախոսության կիրառական նշանակությունը:** Մեր կողմից կատարված հետազոտությունները և գիտական ուսումնասիրության հարթություն բարձրացված

նոր, մինչև այժմ անհայտ փաստերը Հյուսիսային Արցախում ինքնապաշտպանական ջոկատների կազմավորման և ազատագրական պայքարի պատմության ուսումնասիրության տեսանկյունից պատմագիտական, ճանաչողական, դաստիարակչական մեծ կարևորություն ունեն:

Աշխատանքում ներկայացված նոր գիտափաստավաճկագրական նյութը կարող է օգտակար լինել հայ ժողովրդի նորագույն շրջանի, արցախյան հերոսամարտի, ՊԲ ստեղծման և մարտական ուղու, տարածաշրջանի պատմաքաղաքական զարգացման պատմության վերաբերյալ հետագա հետազոտություններում, կիրառվել ԲՈՒՀ-ական, հատկապես, ռազմական ուսումնական հաստատությունների ծրագրերում, թեմատիկ դասախոսությունների, հատուկ դասընթացների նախապատրաստման, դասազբեր և ուսումնական ձեռնարկներ գրելիս: Ինքնապաշտպանության առանձին դրվագների, հայ կամավորականների հերոսական անձնանվեր նկարագրի ճշմարտացի վերհանումը կհանդիսանա երիտասարդ սերնդի հայրենասիրական դաստիարակության և կրթության համար օրինակելի դաս:

**Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը (Սկզբնաղբյուրների և գրականության տեսություն):** Այս հետազոտության համար աղբյուրագիտական հիմք են հանդիսացել Հայաստանի ազգային արխիվից (ՀԱԱ) քաղված նյութերը, ՀՀ պատմագրության արխիվի՝ Գետաշեն և Մարտունաշեն գյուղերից բռնագաղթվածների գործերը: Ուսումնասիրվել է նաև ՌԴ Պետդումայի Մարդու իրավունքների կոմիտեի տրամադրության տակ եղած՝ Հայկ. ԽՍՀ դատախազության Հատուկ քննչական խմբի կողմից պատրաստված փաստաթղթերի փաթեթը, որը 1991 թվականի մայիսին ուղարկվել է Մոսկվա ԽՍՀՄ Գերագույն դատախազությունում հարցը քննելու նպատակով:

Առենախոսության մեջ որպես աղբյուր օգտագործվել են ինքնապաշտպանական գործողությունների մասնակիցների մամակները, մեր կողմից զրառված ականատեսների հուշերն ու վկայությունները, որոնք լույս են սփռում ուսումնասիրվող ժամանակաշրջանի շատ հարցերի պարզաբանման վրա, ցույց տալիս հայ-ադրբեջանական հակամարտությունը պատերազմի վերաճելու պատճառներն ու հանգամանքները, ընդամին, ցուցաբերելով քննադատական մոտեցում, ձգտելով պատմահամեմատական վերլուծության ու փաստերի քննական համադրման միջոցով ընկալելի դարձնել իրադարձությունների պատճառահետևանքային առնչությունները:

Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել նաև արցախյան պատերազմի մասնակիցներ Աշոտ Քալանթարյանի, Վարդան Հովհաննիսյանի, Աշոտ Կարապետյանի, ինչպես նաև պատմաբան Հ. Աբրահամյանի անձնական արխիվների նյութերը:

Հետազոտության հիմնական սկզբնաղբյուրներից է քննարկվող ժամանակաշրջանի մամուլը: Լայնորեն օգտվել ենք խորհրդային կենտրոնական՝ «Իզվեստիա», «Պրավդա», «Կոմսոմոլսկայա պրավդա», «Մոսկովսկիե նովոստի» և հայկական՝ «Խորհրդային Հայաստան», «Հայաստանի Հանրապետություն», «Երկիր», «Ազատամարտ», «Խորհրդային Ղարաբաղ», «ԼՂ Հանրապետություն», «Իրավունք», «Ազդակ» և այլ թերթերից, ամսագրերից, հանդեսներից ու հեռուստառադիոյի անդրադարձներից՝ ցուցաբերելով ընտրողական և քննադատական մոտեցում:

Կարևորվում են նաև մի շարք հեղինակների հուշագրությունները, օրագրություններն ու փաստագրությունները, որոնք պարունակելով որոշ մանրամաս-

նություններ, լրացնում ու հարստացնում են իրադարձությունների պատմական նկարագիրը, օգնում ավելի ճիշտ և ամբողջական ընկալել դեպքերի զարգացման տրամաբանությունը, պատճառահետևանքային կապը, պատասխանել բազմաթիվ հարցադրումների:

Օգտագործված սկզբնաղբյուրների շնորհիվ հնարավորինս մանրամասն վերստեղծել ենք ուսումնասիրվող ժամանակաշրջանում Հյուսիսային Արցախի Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի տարածքում ծավալված իրադարձությունների, մարտական գործողությունների, կամավորական ինքնապաշտպանական ջոկատների կազմավորման և մարտական ուղու պատմությունը:

Թեմային առնչվող առանձին հարցեր լուսաբանվել են Բազրատ Ուլուբաբյանի աշխատություններում<sup>1</sup>, որոնք տեղեկություններ են պարունակում արցախյան շարժման պատմության, պատերազմի ընթացքի, ինքնապաշտպանության կազմակերպչական հարցերի վերաբերյալ, սակայն քննարկվող թեմայի վերաբերյալ, հավանաբար, չունենալով բավականաչափ փաստեր և աղբյուրներ, հեղինակը հպանցիկ է անդրադարձել Հյուսիսային Արցախի իրադարձություններին:

Խորհրդային տարիներին Ադրբեջանի իրականացրած հայահալած քաղաքականության մասին մենագրություններում Կիմ Ղահրամանյանը<sup>2</sup> ներկայացրել է 1988-1990 թթ. Հյուսիսային Արցախում ինքնապաշտպանության կազմակերպման, մարտական գործողությունների ընթացքը լուսաբանող, ԼՂԻՄ-ի հետ վերամիավորվելու ջանքերի մասին ուշագրավ դրվագներ, սակայն 1990-1991 թթ. իրադարձություններին անդրադարձել է համառոտ՝ արծարծելով միայն հայտնի փաստերը:

Յրանտ Աբրահամյանի «Մարտնչող Արցախը» եռագրության երրորդ գրքում և մյուս աշխատություններում<sup>3</sup> արխիվային հարուստ նյութերի, մամուլի և այլ փաստական տվյալների հիման վրա վեր է հանվում Ադրբեջանի բռնատիրության դեմ արցախահայության մղած ազգային-ազատագրական պայքարի պատմությունը: Համառոտակի և ընդհանրական մեկնաբանություններով հեղինակն անդրադարձել է նաև Գետաշենի ենթաշրջանի 1988-1991 թթ. պատմությանը:

Վլադիմիր Խոջաբեկյանի գրքում<sup>4</sup> բացահայտվում են 1988-1990 թթ. հայ բնակչության հանդեպ հետևողականորեն կիրառվող Ադրբեջանի ցեղասպանական և բռնագաղթեցման քաղաքականության, Հայաստանի տարածքից ադրբեջանցիների արտագաղթի իրական պատճառները, արցախյան շարժման ազգային-ազա-

---

<sup>1</sup> Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարը, «Գիր գրոց» հրատ., Երևան, 1994, նույնի՝ Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, «Մ. Վարանդյան» հրատ., Երևան, 1994, նույնի՝ Արցախյան գոյապայքարի տարեգրություն, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 1997, նույնի՝ ժամանակի քննությունը, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., Ստեփանակերտ, 2006:

<sup>2</sup> Ղահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ. Գոյության պայքար, «Մ. Վարանդյան» հրատ., գիրք Ա, Երևան, 1993, գիրք Բ, Երևան, 1993, նույնի՝ Օջախի գիրք. հողը կանչում է, ԴԱԼԼ հրատ., Երևան, 2005, նույնի՝ Արցախ. խեղաթյուրված և անտեսված հարցեր, ԴԱԼԼ հրատ., Երևան, 2013:

<sup>3</sup> Աբրահամյան Յ., Մարտնչող Արցախը (1917-2000), գիրք Գ, (1985-2000), «Դիզակ-պլյուս» հրատ., Ստեփանակերտ, 2007, նույնի՝ Արցախյան գոյամարտ (1917-1991 թթ. Արցախում տեղի ունեցող իրադարձ.-ր), «Գիտելիք» հրատ., Երևան, 1991, նույնի՝ Երբ հայրենիքը վտանգի մեջ է (Էջեր «Արցախ» հայրենակցական միության անցած ուղուց), «Լույս» հրատ., Երևան, 1997, նույնի՝ ճակատագրին ընդառաջ, Փաստավավերագր. ակնարկ, «Ամարաս» հրատ., Երևան, 2001:

<sup>4</sup> Խոջաբեկյան Վլ., Արցախը փորձության ժամին, «Հայաստան» հրատ., Երևան, 1991:

տագրական բնույթը:

Գետաշենի իրադարձությունների վերաբերյալ ընդարձակ անդրադարձ կա Բե-  
նիամին Սիսյանի և Ռիտա Չիլինգարյանի համատեղ աշխատությունում<sup>5</sup>, որը  
Գետաշենի պատմության, մշակույթի, ժողովրդագրական, ազգագրական, բնական  
հարստությունների ուսումնասիրության տեսանկյունից հարուստ նյութ է պարունա-  
կում: Սեր կողմից Գետաշենի ենթաշրջանում ինքնապաշտպանության կազմա-  
կերպման և «Օղակ» ռազմագործողության վերաբերյալ մանրամասն ուսումնասի-  
րության արդյունքները գիտական շրջանառության մեջ դնելով, կարծում ենք, նոր  
փաստերով կհամալրվեն և կհարստանան այս և նախկինում տպագրված այլ  
աշխատությունները:

«Շահումյան-Գետաշեն» հասարակական բարեգործական միության գործու-  
նեության մասին է պատմում Մովսես Ղազարյանի գիրքը<sup>6</sup>: Հեղինակը բավարարվել  
է շրջապատման օղակում հայտնված տարածաշրջանում իրականացված բարե-  
գործական աշխատանքների նկարագրությամբ:

Բժիշկ Գևորգ Գրիգորյանն իր գրքերում<sup>7</sup> առանց չափազանցության պատմում է  
Թաթուլ Կրպեյանի հետ մի քանի հանդիպումների մասին: Չլինելով մարտական  
գործողություններին մասնակից և «Օղակ» ռազմագործողության սանձազերծման  
պահին չգտնվելով Գետաշենում, այլ մի քանի օր հետո հասնելով այնտեղ և  
պատանդ վերցվելով օմօնականների կողմից, նա ներկայացնում է աղբբեջանական  
բանտում իր և մյուս պատանդ բժիշկների հանդեպ կատարված բռնությունները:

Շահումյանի շրջանի ինքնապաշտպանության կազմակերպման դժվարին  
գործը լուսաբանել է Աշոտ Պետրոսյանը<sup>8</sup>: Սակայն գրքում ներկայացված նյութերը  
համակարգված չեն, մարտական գործողությունների մասնակիցների և ականա-  
տեսների վկայությունների ժամանակագրությունը խախտված է: Պատմահամեմա-  
տական վերլուծության, փաստերի և վկայությունների համադրման միջոցով,  
փորձել ենք վերականգնել ժամանակագրությունը, գրքից քաղված տվյալները  
ճշտելով տարբեր աղբյուրներով:

Գրող, հրապարակախոս, Ջորի Բալայանը քաղաքական-հրապարակախոսա-  
կան ուղղվածություն ունեցող գրքում<sup>9</sup> վեր է հանում պատերազմական օրերի  
ժամանակագրությունը: Հեղինակը թռուցիկ անդրադառնում է «Օղակ» գործողու-  
թյան որոշ դրվագներին, մասնավորապես, հաղորդելով Գետաշենի անկումից հետո  
միջազգային իրավապաշտպանների համատեղ քննարկումներից որոշ մանրամաս-  
նություններ:

Աղբյուրագիտական արժեք ունի Սեդա Վերմիշևայի<sup>10</sup> խմբագրությամբ աշխա-  
տությունը՝ «Օղակ» գործողության, ԼԴԻՄ և հարակից տարածքներից, այդ թվում՝  
Գետաշենի ենթաշրջանից խաղաղ հայ բնակչության բռնազաղթի որոշ մանրամաս-  
նությունների նկարագրությամբ: Այս գրքում նույնպես կան չճշտված և թերի  
տվյալներ, որոնք մեր կողմից լրացվել են սույն հետազոտությամբ:

<sup>5</sup> Սիսյան Բ., Չիլինգարյան Ռ., Գետաշեն, «Գասպրինտ» հրատ., Երևան, 2007:

<sup>6</sup> Ղազարյան Մ., Շահումյան-Գետաշեն՝ մաքառումների հազար օրը, «Մհերի դուռ» հրատ.,  
Երևան, 2005:

<sup>7</sup> Գրիգորյան Գ., Թաթուլը, Ա. Բարսամյանի անձն. հրատ., Երևան, 1992, նույնի՝ Դժոխքից  
վերադարձ կա, Հուշագրություն, «Ամարաս» հրատ., Երևան, 1997:

<sup>8</sup> Պետրոսյան Ա., Մեծն Շահեն, հեղինակային հրատ., Երևան, 2011:

<sup>9</sup> Բալայան Ջ., Դժոխք և դրախտ, «Ազգ» թերթի հրատ., Երևան, 1995:

<sup>10</sup> Депортация населения армянских сел НКАО и прилегающих районов. Апрель-июнь 1991 года.  
Под ред. С. Вермишевой, Библиотека Центра русско-армянских инициатив, Ереван, 1995.

Լրագրող-միջազգայնագետ, քաղաքագետ Արսեն Մելիք-Շահնագարովի<sup>11</sup> աշխատության մեջ մերկացվում է ղարաբաղյան հիմնահարցի վերաբերյալ ադրբեջանական զեղծարարությունը: Տեղեկատվական, գաղափարախոսական կտրվածքներով ուսումնասիրելով հակամարտությունը, նա իրադարձությունների ընթացքը վերլուծում է ըստ ԽՍՀՄ, Ադրբեջանի, Չայաստանի և Լեռնային Ղարաբաղի զանգվածային լրատվամիջոցների մեկնաբանությունների՝ կատարելով ընդհանրական վերլուծություն: Գրքի 13-րդ գլխում նկարագրվում են «Օղակ» գործողության որոշ դրվագներ: Սույն թեկնածուականատենախոսությամբ առաջին անգամ հրապարակվող փաստերով փորձել ենք լրացնել բացթողունները:

Լևոն Մելիք-Շահնագարյանի<sup>12</sup> աշխատությունը մերկացնում է 1923 թվականից Ադրբեջանի հանցագործ քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ: Հեղինակը փաստերով ապացուցում է Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի կազմում ընդգրկելու որոշման իրավաբանորեն չհիմնավորված լինելը և քննադատում է խորհրդային տարիներին Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղը Չայաստանից արհեստականորեն անջատելու ծրագրավորված քաղաքականությունը, որից զերծ չմնացին Շահումյանի շրջանը և Գետաշենի ենթաշրջանը: Քանի որ հեղինակը որպես ակնմատես-մասնակից է պատմում և վերլուծում դեպքերի ընթացքը, ապա ավելի արժանահավատ են դառնում հաղորդված տեղեկությունները, որոնք վերաբերում են տարածաշրջանային ընդհանուր զարգացումներին:

Մանվել Սարգսյանը վերլուծական աշխատությամբ<sup>13</sup> պարզաբանում է ինքնապաշտպանական ջոկատների կազմավորման պատմության, տարբեր քաղաքական ուժերի՝ ազգային-ազատագրական պայքարում ներգրավվածությանն առնչվող մի շարք հարցեր, կատարելով քաղաքագիտական բնույթի ընդհանրական վերլուծություններ:

Օտար հեղինակներից իրավապաշտպան բարոնուհի Քերոլյան Քոբսը լինելով ղարաբաղյան հակամարտության արդարացի քաղաքական լուծման կողմնակից, բազմիցս այցելել է հայ-ադրբեջանական հակամարտության գերլարված շրջանները և հատուկ զեկույցներով հանդես եկել Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատում: Վ. Այբների հետ համատեղ գրված աշխատությունում<sup>14</sup> քննարկվում են մարդու իրավունքներին և ժողովուրդների ինքնորոշման խնդիրներին առնչվող հարցեր՝ արցախյան հիմնախնդիրը և հայ-ադրբեջանական հակամարտությունը դիտարկելով թուրքիայի, Իրանի և Ռուսաստանի հակասական շահերի համատեքստում, «էթնիկ գտում» անվանում ԽՍՀՄ-ի և Ադրբեջանի կողմից իրականացված «Օղակ» ռազմագործողությունը:

Իգոր Բաբանովն ու Կոնստանտին Վոյեվոդսկին<sup>15</sup> ներկայացրել են Արցախում տեղի ունեցած դեպքերը, հիմնավորելով, որ «Օղակ» ռազմագործողությունը ԽՍՀՄ

---

<sup>11</sup> Мелик-Шахназаров А., Нагорный Карабах-факты против лжи, Информационно-идеологические аспекты нагорно-карабахского конфликта, Изд.: Волшебный фонарь, М.: 2009.

<sup>12</sup> Мелик-Шахназарян Л., Военные преступления Азербайджана против мирного населения Нагорно-Карабахской Республики. Изд.: Наири, Ер.: 1997.

<sup>13</sup> Саркисян М., Нагорный карабах: Война и политика (1990-93 гг.). Война в Нагорном Карабахе и внутренний конфликт в армянском обществе. Ер.: Армянский центр стратегических и национальных исследований, 2010.

<sup>14</sup> Caroline Cox and John Eibner: Ethnic Cleansing in Progress: War in Nagorno Karabakh: Institut for Religious Minorities in the Islamic World: Zurich, London, Washington, 1993.

<sup>15</sup> Бабанов И., Воеводский К., Карабахский кризис, Изд. Санкт-Петербургского Комитета Гуманитарной помощи Карабаху, Санкт-Петербург, 1992.



ղեկավարության մասնակցությամբ ու ցուցումներով նախապես ծրագրավորված, կազմակերպված գործողություն էր:

Վիկտոր Կրիվոպուսկովն իր գրքում<sup>16</sup> փաստավավերագրական ճշգրտությամբ նկարագրում է ռազմական գործողության նախապատրաստական աշխատանքները: Հեղինակը եզրակացնում է, որ եթե Սունգայիթում, Բաքվում, Կիրովաբադում, Լեռնային Ղարաբաղում «Օղակ» գործողության ժամանակ հայերի սպանություններին, ջարդերին և գործարկված այլ բռնություններին խորհրդային ղեկավարության, մեծ տերությունների առաջնորդների և առաջադեմ հասարակայնության կողմից տրվել պատշաճ իրավական և քաղաքական գնահատական, ապա հնարավոր կլիներ խուսափել միջազգային անաբեկչության հետագա աճից:

Բրիտանացի լրագրող, հասարակական գործիչ Թոմաս դը Վաալը<sup>17</sup> լինելով Հարավային Կովկասի խնդիրներով զբաղվող փորձագետ, անձնական դիտարկումների, փաստաթղթային հետազոտությունների, հայտնի քաղաքական, պետական, հասարակական գործիչների և հակամարտության մասնակիցների հետ ունեցած անձնական հարցազրույցների տվյալների հիման վրա գրված աշխատությունում առանձին գլխով անդրադառնում է «Օղակ» գործողությանը, որը համարում է «ԽՍՀՄ պատմության վերջին քաղաքացիական պատերազմը»: Նա համոզված է, որ ֆիդայիները անաբեկչներ չէին, այլ պայքարում էին հանուն արդարության, իսկ հարցը խաղաղ ճանապարհով լուծելը միակ ճիշտ ելքն է փակուղուց:

Թեմային այս կամ այն չափով և առիթով անդրադարձել են նաև այլ հեղինակներ<sup>18</sup>:

---

<sup>16</sup> Кривописков В., Мятежный Карабах. Из дневника офицера МВД СССР. Издание второе, дополненное. М.: Голос-пресс, 2007.

<sup>17</sup> Thomas de Waal, Black Garden: Armenia and Azerbaijan through Peace and War, New York University Press, New York and London, 2003.

<sup>18</sup> Առաքելյան Ռ., Ծուխ, «Հայաստան» հրատ., Երևան, 1993, Արշակյան Ա., Արցախյան գոյապայքար (1985-1992), Վ. Բրյուսովի անվան պետ. լեզվաբ. համալսարան, «Լինգվա» հրատ., Երևան, 2004, Մահ չիմացյալ՝ մահ, մահ իմացյալ՝ անմահություն, Հուշամատյան՝ Արցախյան պայքարում նահատակվածների մասին, «Առաջընթաց» հրատ., Երևան, 1993, Բակուր, Արցախյան գոյամարտի համահավաք, Մատենաշար, «Շուշի» ԲՀ հրատ., հ. 1, Երևան, 2008, հ. 2, Երևան, 2008, հ. 3, Երևան, 2009, Բեջանյան Հ., Մարտական հաշվարկ, «Տնտեսագետ» հրատ., Երևան, 2013, Գրիգորյան Ս., Հավերժախոս պանթեոն (1988-1995), «Ուխտատուն» հրատ., Երևան, 2004, նույնի Հավերժության լուսամտյան, Հուշատեղեկատու, «Ուխտատուն» հրատ., Երևան, 2001, Գևորգյան Հ., Պետոն, «Մ. Վարանդյան» հրատ., Երևան, 1994, Դևրիկյան Վ., Չսկսված և չավարտված պատերազմը, «Ձանգակ-97» հրատ., Երևան, 2004, Հարությունյան Մ., Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, «Գիտություն» հրատ., Երևան, 2000, Հակոբյան Թ., Կանաչ ու սև. Արցախյան օրագիր, հեղինակային հրատ., Երևան-Ստեփանակերտ, 2008, Մարտիկյան Գ., Ապրելու բանաձև, գիրք երրորդ, «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2008, Սինասյան Է., Հայաստանի երրորդ Հանրապետության պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, Նանագույան Ս., Արժիվները բարձունքներ են տեմչում, գիրք Ա, «Մանկավարժ» հրատ., Երևան, 1992, նույնի՝ գիրք Բ, Երևան, 1993, նույնի՝ գիրք Գ, Երևան, 1993, Չիբուխյան Ա., Հերոսամարտի պողպատե թևերը. արցախյան հերոսապատում, Երկրորդ լրամշակված հրատ.-ն, «Ձանգակ-97» հրատ., Երևան, 2008, նույնի՝ Արարման վեցերորդ օրը, գիրք Ա, «Ձանգակ-97» հրատ., Երևան, 2006, նույնի՝ գիրք Բ, Երևան, 2009, Ջանիկյան Գ., Հաղթագեները, «ԴԱԼԼ» հրատ., Երևան, 2009, Սիմոնյան Ա., Մանուկյան Ժ., Երևանի պետական համալսարանը Արցախյան գոյապայքարում, Հայազիտ. հետազոտ. ինստ., ԵՊՀ հրատ., Երևան, 2011, 256 էջ. 14 ներդիր: Карапетян С., Арцах, Гардман, Нахиджеван-триединая формула территориальной целостности

«Օղակ» («Կոլցո») ռազմական գործողությանն անդրադարձած հեղինակները, մեծավնասամբ, խորամուխ չեն եղել Գետաշենի ինքնապաշտպանության մանրամասնությունների մեջ, իսկ եթե անդրադարձել են, ապա նախկինում տպագրված տեսակետները թարմանցնելով և կրկնելով մեկը մյուսին: Իհարկե, անժխտելի փաստ է, որ պատճառելով հողային, գույքային, մշակութային, տնտեսական և մարդկային կորուստներ՝ հայկական կողմից բռնությամբ խլվեց և հակառակորդին հանձնվեց մեր պատմական հայրենիքի մի հատվածը: Այն պայմաններում, երբ կամավորական ջոկատների մարտիկներն անձնվիրությամբ և անօրինակ սխրագործություններով հուսահատ փորձեր էին կատարում փրկելու հայրենակիցներին բնաջնջումից, ընդվզելով քանակական և որակական առումով անհամեմատելի ահռելի ուժի՝ խորհրդային բանակային և ադրբեջանական հատուկ ստորաբաժանումների դեմ՝ չունենալով պետական աջակցություն, Գետաշենի ենթաշրջանի անկման համար մեղադրել ինքնապաշտպանության կազմակերպիչներին<sup>19</sup>, համարում ենք ո՞չ ճիշտ մոտեցում: Գիտակցված ինքնագոհության գնալով նրանք փորձեցին անել առավելագույնը պետական իշխանության անգործության պայմաններում, որսորդական հրացաններով պայքարելով ընդդեմ ԽՍՀՄ կանոնավոր բանակի, ավելին՝ երբ ընդունվում էին քաղաքական որոշումներ, իսկ «անվտանգության երաշխավոր» բանակը բռնաճնշումների էր ենթարկում սեփական քաղաքացիներին՝ իր գործողությունները քողարկելով կեղծ պատճառաբանություններով:

**Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը:** Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, որոնք բաժանված են երկուական ենթագլուխների, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից:

**Ներածության մեջ** հիմնավորվում են թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, կիրառական նշանակությունը, թեմայի ժամանակագրական սահմանների ընտրությունը, ներկայացվում են հետազոտության հիմնական նպատակն ու խնդիրները, տրվում է օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը:

**Առաջին գլուխը՝ «ԱԶՍԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՎԵՐԵԼՔԸ ԳԵՏԱՇԵՆԻ ԵՆԹԱՇՐՋԱՆՈՒՄ»,** բաժանված է երկու ենթագլուխների:

**Առաջին ենթագլխում,** որը վերնագրված է «Իրադրությունը Գետաշենի ենթաշրջանում (1988-1990 թթ. օգոստոս)», նկարագրվում է Գետաշենի ենթաշրջանում ազգային-ազատագրական պայքարի վերելքը:

1923 թ. պատմական Գյուլիստանի գավառի տարածքում կազմավորված Խանլարի և Շահումյանի շրջաններում խորհրդային իշխանության տարիներին բազմիցս հարց էր բարձրացվել Շահումյանի շրջանը ԼՂԻՄ-ի կազմի մեջ ընդգրկելու վերաբերյալ, սակայն միշտ մերժվել էր Ադրբեջանի իշխանությունների կողմից: Ղարաբաղյան շարժման սկզբից ևեթ Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի հայ բնակչությունը հանդես եկավ Լեռնային Ղարաբաղի կազմում Հայաստանին վերամիավորվելու պահանջով:

1989 թ. նոյեմբերի 27-ին Գետաշեն գյուղում տեղի է ունենում Գետաշենի

---

Восточной Армении. Изд.: “Тигран Мец”, Ер.: 2008. Арутюнян В., События в Нагорном Карабахе, Хроника. Часть IV, Изд.: “Гитутюн” НАН РА, Ер.: 1994.

<sup>19</sup> Հարությունյան Ս., Թցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ.: Թեկնածուական ատենախոսության սերմագիր, ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ., Երևան, 2001:

ենթաշրջանի հայության առաջին համագումարը, որին մասնակցում են Գետաշեն, Մարտունաշեն, Ազատ, Կամո գյուղերից ընտրված 300 պատգամավորներ: Համագումարն ընդունում է որոշում «ստեղծել Գետաշենի ենթաշրջանի Գետաշեն, Մարտունաշեն, Ազատ, Կամո գյուղերից հայ ազգաբնակչության Ազգային խորհուրդ և այն ճանաչել որպես տարածաշրջանի իշխանության և կառավարման միակ մարմին, որի որոշումների կատարումը պարտադիր է ենթաշրջանի ողջ բնակչության համար, Գետաշենի ենթաշրջանի Գետաշեն, Մարտունաշեն, Ազատ, Կամո գյուղերը դուրս բերել Ադրբեջանական ՍՍՀ խանլարի շրջանի վարչատարածքային ենթակայությունից և միացնել հարևան Շահումյանի գյուղական համայնքին»<sup>20</sup>: Գետաշենի ենթաշրջանի Ազգային խորհուրդը և ընդունված որոշումները ճանաչելու պահանջով համագումարը դիմումներ հղեց Արցախի Ազգային, ՀԽՍՀ Գերագույն և ԽՍՀՄ Գերագույն խորհուրդներին:

1989 թ. դեկտեմբերի 1-ին Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի անդամների մասնակցությամբ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանում ընդունվում է համատեղ որոշում՝ «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին»<sup>21</sup>, որի 5-րդ կետով «Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը պարտավորվում են ներկայացնել Ղյուսիսային Արցախի Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի հայ բնակչության ազգային շահերը»<sup>22</sup>:

Մի քանի ամսվա ընթացքում Գետաշենի ենթաշրջանը Շահումյանի շրջանին միացնող Կուշի Արմավիր գյուղը ադրբեջանականացվելու հետևանքով Գետաշենի ենթաշրջանն իսպառ կտրվեց Շահումյանի շրջանից, լրիվ կղզիացվեց ու մեկուսացվեց, իսկ 1990 թ. հունվարի 12-20-ը Բաքվում, Շահումյանի և խանլարի շրջաններում, Գետաշեն, Կամո, Ազատ գյուղերում ստեղծվեց արտակարգ դրություն<sup>23</sup>: վանդալիզմի բացահայտ դրսևորումներով. կատարվում էին սպանություններ, իրկիզումներ, շրջափակում էին ճանապարհները, կամուրջները, առևանգվում էին պատանդներ<sup>24</sup>: Երևանում տեղի ունեցած հանրահավաքում կոչ արվեց կամավորական ջոկատներ կազմավորել և օգնության գնալ շահումյանցիներին ու գետաշենցիներին<sup>25</sup>:

1990 թ. մարտի 1-8-ին Ազատ և Կամո գյուղերի հայ բնակչությունը ենթարկվեց անարյուն բռնազաղթի<sup>26</sup>, որը ԽՍՀՄ ղեկավար մարմինների թողտվությամբ Ադր. ԽՍՀ-ի կառավարության կողմից իրականացվող բռնությունների, կողոպուտի ու տեղահանությունների քաղաքականությունը զուգորդվում էր խորհրդային ներքին գործերի ու ադրբեջանական ՄՅՏ-ի կամայականություններով, տնտեսական շրջափակմամբ և տանում էր դեպի Ադրբեջանի կողմից նախապատրաստվող բացահայտ ագրեսիային՝ ընդդեմ ԼՂԻՄ-ի և ՀՀ-ի:

Խորհրդային ավտոմատ զենքով զինված ադրբեջանական ավազակային խմբերի շարունակական հարձակումներից պաշտպանվելու նպատակով սկզբնական

<sup>20</sup> Սիսյան Բ., Չիլինգարյան Ռ., Գետաշեն, Երևան, 2007, էջ 327:

<sup>21</sup> «Խորհրդային Հայաստան», 1 դեկտեմբերի, 1989: Տե՛ս նաև՝ «Խորհրդային Ղարաբաղ», 5 դեկտեմբերի, 1989:

<sup>22</sup> «Խորհրդային Հայաստան», 3 դեկտեմբերի, 1989:

<sup>23</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 84, գ. 40, ք. 91:

<sup>24</sup> Տե՛ս Моссова И., Овнянян А., Вандализм в Баку, «Тителик», Ер., 1991, էջ 35-42:

<sup>25</sup> «Խորհրդային Ղարաբաղ», 16 հունվարի, 1990:

<sup>26</sup> Նույնի՝ 7 մարտի, 1990:

շրջանում գյուղերում միայն տեղաբնակներից կազմակերպվում են աշխարհագրո-րային ջոկատներ: Մարտունաշենի ջոկատը ղեկավարում էր Սերգեյ Մանվելի Դա-կոբյանը, իսկ Գետաշենի ջոկատը՝ տեղի դպրոցի ուսուցիչ Բախշի Բոյախյանը: Այդ ջոկատները զինված են եղել գյուղատնտեսական տարբեր զործիքներով՝ եղան, բահ, մահակ, գերանդի, հատուկենտ որսորդական հրացաններով, նաև աղորե-ջանական ելուզակներից խլված զենքերով:

Լեռնային Ղարաբաղում արտակարգ իրադրության, հաղորդակցության և կապի բացարձակ շրջափակման, ինչպես նաև մարզի բնակչության նկատմամբ ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի կողմից համատարած հսկողության պայմաններում զինված ինքնապաշտպանության կազմակերպումը բացառիկ երևույթ էր: Անվտանգության համակարգ ստեղծելու տրամաբանությամբ պայմանավորված զինված ջոկատների կազմավորումը և տեղաբաշխումը տեղի էր ունենում հետևյալ ուղղություններով. Զյուխիսային Արցախի տարածքը՝ Շահումյանի շրջանը և Գետաշենի ենթաշրջանը, ԼՂԻՄ-ը, ԼՂԻՄ-ի Շուշիի շրջանի Բերդածորի ենթաշրջանի հայկական գյուղա-խումբը: Ջոկատների որոշակի տեղաբաշխվածության այս գոտիները հիմնա-կանում վերահսկվում էին Երևանից եկած տարբեր կազմակերպիչների կողմից և զենք էին ստանում առանձին. Շահումյանի շրջան՝ Շահեն Մեղրյան, Գետաշենի ենթաշրջան՝ Թաթուլ Կրպեյան, ԼՂԻՄ՝ Մանվել Սարգսյան, Բերդածորի ենթաշրջան՝ Անդրանիկ Զարությունյան:

1990 թ. գարուն-ամառ ժամանակահատվածում Աղրբեջանի իշխանությունները վերջնականապես ձեռնամուխ լինելով Լեռնային Ղարաբաղի խնդիրը ուժային ճանապարհով լուծելուն, սկսում են ստեղծել հատուկ պատժիչ ստորաբաժանու-ններ: 1990 թ. հուլիսի 25-ին ԽՍՀՄ պրեզիդենտ Մ. Գորբաչովը հրամանագիր ստոր-գրեց. «ԽՍՀՄ օրենսդրությամբ չնախատեսված սպառազեն կազմավորումների ստեղծումն արգելելու և անօրինականորեն զենք պահելու դեպքում այն առգրա-վելու մասին»<sup>27</sup>: Արցախի հայերից զինամթերքի մնացորդները խլելով՝ Կրեմլը միաժամանակ զենք էր մվիրում Աղրբեջանական ԽՍՀ ՆԳՆ-ին<sup>28</sup>, որն այդ զենքն ուղղում էր հայ բնակչության դեմ:

1990 թվականի օգոստոսին Աղրբեջանի կառավարող շրջանակներում կրկին սկսում է շրջանառվել Շահումյանի շրջանի՝ որպես վարչական միավորի լուծար-ման հարցը: Չնայած որ Շահումյանի շրջանը և Գետաշենի ենթաշրջանը դադա-րեցրել էին ամեն տեսակի հարաբերությունները Աղրբեջանի իշխանությունների հետ, այնուամենայնիվ, դա չէր խանգարում Ադր. ԽՍՀ կառավարությանն այդ շրջանները համարել Աղրբեջանին պատկանող տարածքներ և որոշումներ ընդունել ներքին սահմանները վերածնելու ցուցումներով: Օգոստոսի 29-ին Աղրբեջանի կոմկուսի Կենտկոմի բյուրոն կասեցրեց Շահումյանի շրջկոմի գործունեությունը և ԽՍՀԿ շարքերից վտարեց շրջկոմի առաջին քարտուղար Վլ. Աղաջանյանին՝ ազգայնականության և անջատողականության մեղադրանքով:

**Երկրորդ ենթալիտում «Ինքնապաշտպանական մարտերը (1990 թ. սեպտեմ-բեր-1991 թ. մայիս)»**, ներկայացվում է Գետաշենի ենթաշրջանում Թաթուլ Կրպե-յանի գլխավորությամբ կազմակերպված 8-ամսյա ինքնապաշտպանությունը:

1990 թվականի սկզբից ԶՅԴ-ը սկսում է Զայաստանի և Արցախ-Ղարաբաղի տա-րածքում զինված պայքարի նախապատրաստական աշխատանքները. զինված ջո-կատների կազմավորումը, մարտարվեստի դասերն ու մարզումները, զենք-զինա-

<sup>27</sup> «Известия», 27 июля, 1990. Տե՛ս նաև՝ «Խորհրդային Զայաստան», 27 հուլիսի, 1990:

<sup>28</sup> «Коммерсантъ», 20 мая, 1991.

մթերքի հայթայթումը, կամավորականների հավաքագրումը: 1990 թ. օգոստոսի երկրորդ կեսին թափաքաղաքում Կրպեյանը ՀՀԳ առաջին կազմակերպված ջոկատի հետ, որում ընդգրկված էին թվով 29 մարտիկներ, հասավ Շահունյան: Շահեն Մեղրյանի օժանդակությամբ Գյուլիստանի անտառում հիմնվեց ռազմակայան, որտեղ գաղափարական և ռազմական պատրաստություն ստանալուց հետո ժամանած ջոկատները տեղաբաշխվում էին տարբեր ուղղություններով:

Երևանի պետական համալսարանի ուսանող թափաքաղաքում Կրպեյանը չորրորդ կուրսում ուսումը կիսատ թողնելով, օրինական փաստաթղթերով՝ որպես Գետաշեն գյուղի բնակիչ, տեղի դպրոցում ուսուցիչ աշխատելու համալսարանական գործուղումը<sup>29</sup> ձեռքին, 1990թ. սեպտեմբերին մեկնեց Շահունյան: ՀՀԳ երկրորդ մարտական ջոկատը թափաքաղաքում Կրպեյանի գլխավորությամբ Գյուլիստան հասավ սեպտեմբերի 17-ին: 10 օր ռազմակայանում մնալուց հետո սեպտեմբերի 28-ին մենակ, առանց ջոկատի, զինվորական մեքենայով նա հասավ Գետաշեն: Գետաշենի ենթաշրջանի ինքնապաշտպանության պատասխանատուն և ջոկատների ընդհանուր հրամանատարը, հաստատվելով Գետաշենում, աշխատանքի ընդունվեց գյուղի ութնամյա և միջնակարգ դպրոցներում<sup>30</sup>, դասավանդելով պատմություն և աշխարհագրություն, որպեսզի կասկածի տեղիք չտա խորհրդային միլիցիայի և ՊԱԿ-ի աշխատակիցների շրջանում:

Գետաշեն-Մարտունաշեն ենթաշրջանում այդ ընթացքում ընդմիջումներով գործել են նաև Հրազդանի «Ալաշկերտ» ջոկատը՝ Հրաչ Դանիելյանի («Ջարգանդ»), «Մալաթիա-Սեբաստիա» ջոկատը՝ Վահան Ջատիկյանի, «Արաբո» ջոկատը՝ Սանվել Եղիազարյանի, ապա 1991 թվականի ապրիլի 19-ին նրա վիրավորվելուց և ապրիլի 20-ին Երևան տեղափոխվելուց հետո՝ Սիմոն Աչիբգյուզանի («Դեդ») գլխավորությամբ: Արթիկից, Ապարանից, Արարատից, Արտաշատից, Հոկտեմբերյանից (այժմ՝ Արմավիր), Էջմիածնից եկած ջոկատները փոխարինում էին մեկը մյուսին՝ անցկացնելով Գետաշենի ենթաշրջանում կարճ ժամանակահատված: Գետաշեն մտած բոլոր ջոկատները, ներկայանում էին թափաքաղաքում Կրպեյանին:

Աշխարհից կտրված գյուղ-պետությունում խորհրդային իշխանություններն այլևս չունեին նախկին կառավարման լծակներն ու ազդեցությունը<sup>31</sup>: Գետաշենի ենթաշրջանի խորհրդային տնտեսությունների ղեկավարությունը չէր կարող հաշվի չնստել ռազմական դրության մեջ գտնվող գյուղի պաշտպանական, սոցիալ-տնտեսական խնդիրներն իրականացնող ռազմա-քաղաքական մարմնի հրամանատարության հետ՝ ի դեմս թափաքաղաքում Կրպեյանի:

Հյուսիսային Արցախում ինքնապաշտպանության կազմակերպման սկզբնական փուլի լուսաբանման տեսանկյունից կարևորվում է Լեռնապարի քաղաքական-գաղափարական և ռազմական մարմնի (ԼՊՄ) գործունեությունը: Սեպտեմբերի 17-ին Գյուլիստանի ռազմական ճամբարում տեղի ունեցավ ԼՊՄ անդրամիկ նիստը<sup>32</sup>, որի ժամանակ քննարկվեցին կազմակերպչական հարցեր: Ժողովի որոշմամբ թ. Կրպեյանն ստանձնեց ԼՊՄ Գետաշենի ենթաշրջանի բջջի ղեկավարությունը:

<sup>29</sup> ԵՊՀ թիվ 208 հրաման, պար. 28, 13.09.1990, հեղ. անձն. արխիվ:

<sup>30</sup> Քաղվածք Գետաշենի թերի միջնակարգ դպրոցի տնօրենի թիվ 29 հրամանից, հիմք՝ ԵՊՀ թիվ 208 հրաման, 13.09.1990, հեղ. անձն. արխիվ:

<sup>31</sup> Դանիելյան Մ., 4. Գետաշեն. ինքնապաշտպանություն-ինքնիշխանություն, «խորհրդային Հայաստան», 26 հունվարի, 1990, էջ 3-4:

<sup>32</sup> Կրպեյան թ., Գետաշենյան օրագիր, Լեռնապարի քաղաքական, գաղափարական և ռազմական մարմնի (ԼՊՄ) առաջին նիստի արձանագրությունը, հեղ. անձն. արխիվ:

Շնորհիվ նրա կողմից իրականացված հասարակական-քաղաքական, գաղափարական-քարոզչական և կազմակերպչական գործունեության, գյուղի ինքնապաշտպանությունը դրվեց նոր մակարդակի վրա: Նա ստեղծեց կառավարման աստիճանակարգային (հիերարխիկ) ամուր համակարգ, մեծ աշխատանք տարավ պաշտպանական դիրքերի («պոստերի») տեղաբաշխման ու աշխարհագրայինների ինքնապաշտպանությանը ներգրավելու հարցերում՝ ցուցակագրելով բոլոր զենք ունեցողներին և նրանց, ովքեր ի վիճակի էին «պոստի» կանգնել<sup>33</sup>: Նախկին պահակակետերը և առավել վտանգավոր ուղղությունները նրա ամնիջական մասնակցությամբ և հսկողությամբ ամրացվեցին և համալրվեցին նորերով, մշակվեց գործողությունների միասնական ծրագիր և որոշակի ռազմավարություն տեղացի աշխարհագրայինների և ՀԽՍՀ-ից օգնության գնացած ջոկատների համար, սահմանվեց շուրջօրյա հերթապահություն, որի շնորհիվ կամավորականներն ու աշխարհագրայիններն ավելի կազմակերպված էին ետ մղում ադրբեջանական զորիները: Այս ամենի շնորհիվ Գետաշենը դարձավ տարածաշրջանում ամենաուժեղ ամրակետը՝ ֆորպոստը, որը չեզոքացնելը դարձավ ԽՍՀՄ և ադրբեջանական իշխանությունների առաջնահերթ խնդիրը: Խորհրդային բանակի հովանավորությամբ գործող հակառակորդից զինվածության մակարդակով զիջող, բայց մարտական ամուր ոգով ազատամարտիկները պաշտպանություն էին իրականացնում անհավանական իրավիճակներում և միջոցներով: Բոլորը միակարծիք էին այն հարցում, որ, եթե խորհրդային բանակը չօգնի, ադրբեջանական ՕՍՕՆ-ը չի կարողանա տիրանալ Գետաշենի ենթաշրջանին:

Գետաշենից բացակայելու հազվադեպ և կարճատև դեպքերում հրամանատարին փոխարինում էր Արթուր Կարապետյանը՝ «Կոմիսարը», որը ռազմական գծով հրամանատարի տեղակալն էր: Ձենք-գինամթերքը միշտ չէր բավականացնում և հարկ էր լինում երբեմն դիմել պակասը հակառակորդից լրացնելու հատուկ գործողությունների, որ բավականին ճարպիկ ձևով իրականացնում էին 2-3 հոգանոց խմբերով՝ Թ. Կրպեյանի և Ա. Կարապետյանի, Եղիշ Մարկոսյանի՝ Եղիշ դայու, նրա որդիների համատեղ մշակված ծրագրերով: Անգնահատելի է նաև զինագործ Աշոտ Քալանթարյանի՝ «Աշոտ քեռու» կողմից ղեկավարած զինագործ վարպետներից կազմված փոքր խմբի գործունեությունը, որի շնորհիվ ջոկատներն ստանում էին ինքնաշեն զենքի և զինամթերքի որոշակի խմբաքանակ:

Բացի պաշտպանական խնդիրների իրագործումից, լիակատար շրջափակման պայմաններում Կրպեյանը զբաղվում էր նաև գյուղերի տնտեսական զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, գյուղատնտեսական, սոցիալական-կենցաղային, նյութական ապահովման և այլ հարցերի լուծմամբ: Ջոկատի ազատամարտիկները զիջերային պարտադիր հերթապահությունից հետո, ցերեկներն օգնում էին գյուղացիներին՝ գործուն մասնակցություն ունենալով գյուղի հասարակական կյանքին և գյուղատնտեսական աշխատանքներին, անտառից փայտ էին բերում մանկապարտեզի ու դպրոցի համար, սննդի սուղ պաշարներից բաժին հանում կարիքավորներին: Տ. Քոչարյանը հիշում է, որ «...մեծ դժվարությամբ, հակառակորդի չդադարող կրակահերթերի տակ Գետաշենում Թաթուլը կազմակերպեց գարնանացանը<sup>34</sup>»:

Նոյեմբերի 30-ի մարտից հետո ենթաշրջանում իրադրությունը կտրուկ փոխվեց

<sup>33</sup> Կրպեյան Թ., նույն տեղում: Տե՛ս նաև՝ Վ. Հովհաննիսյանի, Վ. Ջատիկյանի հարցազրույցներից, հեղ. անձն. արխիվ:

<sup>34</sup> Տ. Քոչարյանի հարցազրույցից, հեղ. անձն. արխիվ:

ի օգուտ հայկական կողմի: Մարտունաշենից մինչև Ալիարակ լիճը ձգվող 20 կմ տարածքի վերահսկողությունն սկսեցին իրականացնել հայկական ինքնապաշտպանական ջոկատները:

Դրությունը կրկին սրվեց, երբ 1991 թ. հունվարի 14-ին Ադրբեջանի ղեկավարությունը որոշում ընդունեց ԼՂԻՄ-ին հարակից հայկական Շահումյանի շրջանը և Գետաշենի ենթաշրջանը միացնել ադրբեջանական Կասում-Իսմայիլովի շրջանին՝ ստեղծելով նոր Գերանբոյի շրջան՝ վերջնականապես վերացնելով Շահումյանի շրջանի անվանումը<sup>35</sup>: Դրան անմիջապես հաջորդեց ադրբեջանական ՕՍՕՆ-ի կուտակումը Գետաշենի և Մարտունաշենի սահմաններին, որոնք ներկայացրեցին գյուղերը դատարկելու մասին հերթական վերջնագիրը: Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի բնակչությունը չենթարկվեց այդ ապօրինի պահանջին՝ չհամաձայնվելով միանալ Կասում-Իսմայիլովի շրջանին<sup>36</sup>:

1991 թ. գարնանն արդեն ոչինչ չէր կարող խանգարել ադրբեջանական ղեկավարության, ԽՍՀՄ ԼՂՆ-ի և ՊԱԿ-ի համատեղ ուժերով կամխամտածված գործողությունների իրականացմանը, որի վերջնական նպատակն էր արցախահայության բռնի տեղահանությունը: Սի քանի անգամ ինքնապաշտպանական ուժերը ետ մղեցին ազերիների գրոհները: Ադրբեջանական օմօնականները հակահարված ստանալով ազատամարտիկներից՝ ետ շարտվեցին և այլևս չէին համարձակվում ինքնուրույն գործողությունների դիմել:

Մինչև ապրիլի 30-ի գլխավոր հարձակումը ԽՍՀՄ ԼՂՆ ներքին զորքերի զրահանքենաները անձնագրային ռեժիմի ստուգման պատրվակով մի քանի անգամ ներխուժեցին Գետաշեն և պահանջեցին. «Տվեք «մորուքավոր ուսուցչին» և մենք ձեզ հանգիստ կթողնենք: Իսկ մինչ նրանք ստուգում էին ամեն ծակուծուկ, Թաթուլը կազմակերպում էր և տեղանքին ծանոթ գետաշենցիների օգնությամբ ջոկատները հասցնում էին բոլորից աննկատ քաշվել անտառ»<sup>37</sup>:

**Երկրորդ գլուխը՝ «ՕՂԱԿ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**, նույնպես բաժանված է երկու ենթագլուխների:

**Առաջին ենթագլխում**, որը վերնագրված է «Օղակ» գործողության ծավալումը», ներկայացվում է, թե ինչպես Շահումյան-Գետաշեն ինքնապաշտպանական ուժերի ոչնչացման ծրագիրը, որը գոյություն ուներ դեռևս 1989 թվականից (ըստ Մութալիբովի)<sup>38</sup>, գործողության մեջ դրվեց: 1990-91 թթ. ԼՂԻՄ-ում ԽՍՀՄ ԼՂՆ քննչական-օպերատիվ հատուկ խմբի շտաբի պետ Վ. Կրիվոպուսկովի տվյալներով դեռևս 1990 թ. նոյեմբերին իր ձեռքն ընկան Ադրբեջանի կառավարության գաղտնի նյութերը, որոնց թվում՝ նաև նախկին Խանլարի և Շահումյանի շրջանների գյուղերից հայ բնակչության բռնի տեղահանության ծրագիրը, որը 1991 թ. փետրվարին հավանության արժանացավ<sup>39</sup> խորհրդային իշխանությունների կողմից: Այդ քաղաքականության ձևակերպումը և գազաթնակետը դարձավ «Օղակ» գործողությունը □

Ապրիլի 16-ին Բաքվում Ադրբեջանի նախագահին անցկացնում է խորհրդակցություն հանրապետության ԼՂՆ-ի, ՊԱԿ և դատախազության ղեկավարների մասնակցությամբ՝ նվիրված ԼՂԻՄ-ի և հարակից շրջանների իրադրությանը: Խորհրդակցու-

<sup>35</sup> “Бакинский рабочий”, 15 января, 1991.

<sup>36</sup> “Московские новости”, 3 февраля, 1991.

<sup>37</sup> Տ. Քոչարյանի հարցազրույցից, հեղ. անձն. արխիվ:

<sup>38</sup> Thomas de Waal: Armenia and Azerbaijan...pp. 143-164.

<sup>39</sup> Кривоусков В., Мятёжный Карабах. М.: Голос-Пресс-2007, էջ 201:

թյունում որոշվում է հայերի արտաքսմանը տալ իրավաբանական ձևակերպում՝ Գետաշենի ենթաշրջանում անցկացնելով «անձնագրային ռեժիմի ստուգում»:

Նախօրոք մշակված «Օղակ» ռազմական գործողությունն սկսվեց ապրիլի 29-ի լույս 30-ի գիշերը լայնատարած հարձակումով: Գործողությանը մասնակցող Կիրովաբադում տեղակայված ԽՍՀՄ Ներքին գործերի նախարարության ներքին գործերի Անդրկովկասյան օկրուգի 4-րդ բանակի, 23-րդ մոտոհրաձգային դիվիզիայի զորամասերը, Բաքվի հատուկ գնդի վարձկանները և ադրբեջանական օժանկանները Սարիսուի կողմից տանկերի, հետևակի ռազմական մեքենաների և գրահամեքենաների շարասյուններով, ընդհանուր թվով 207 միավոր մարտական տեխնիկա<sup>40</sup>, մոտ 6000 հոգի նարդուժ, որոնց մի մասը նախորդ շաբաթվա ընթացքում դիրքավորվել էր անտառներում և բլուրների վրա, «Կրոկոդիլ» և «Կոբրա» տեսակի 6 ուղղաթիռներ<sup>41</sup> աստիճանաբար շրջապատման օդակի մեջ են առնում Մարտունաշենն ու Գետաշենը՝ հայկական գյուղերի հայաթափության իրական նպատակը քողարկելով «անձնագրային ռեժիմի ստուգում» և «պայթար ապօրինի զինված կազմավորումների կամ գրոհայինների դեմ» կեղծ ձևակերպումների ներքո:

Ականատեսները վկայում են, որ մայիսի առաջին օրերին Գետաշենում են եղել Անդրկովկասյան ռազմական օկրուգի 4-րդ բանակի հրամանատար, բանակի զենբալ Սոկոլովը և ԽՍՀՄ ՆԳՆ դիվիզիայի հրամանատարի տեղակալ գնդապետ Ե. Միշինը, Ադրբեջանի Կենտկոմի երկրորդ քարտուղար Պոլյանիչկոն, այլ պաշտոնատար անձինք<sup>42</sup>: Գործողությունը Խանլարից ղեկավարել է զենբալ-գնդապետ Շատալինը<sup>43</sup>:

Հարձակման սկզբից եթե հրետանին ուղիղ նշանառության կրակոցներով պայթեցրեց ու հրկիզեց բազմաթիվ բնակելի տներ և տարբեր նշանակության այլ կառույցներ, ընդ որում շուրջ 200 տնտեսություն ունեցող Մարտունաշենը, որտեղ Սիմոն Աչիբգոյանի ղեկավարությամբ ազատամարտիկների ջոկատը փորձեց դիմադրություն ցույց տալ, սակայն զոհեր և վիրավորներ տալով նահանջեց, ամբողջությամբ ավերվեց: Գյուղի բնակիչներն իրենց պաշտպանելու խնդրանքով դիմում էին բանակայիններին, սակայն մնում անպատասխան: Այդ ընթացքում ՕՍՕՆ-ականները գյուղի մատույցներից աստիճանաբար խորանում են դեպի կենտրոն, որտեղ հետզհետե հավաքվում էին մազապուրծ փախած բնակիչները, հիմնականում կանայք և երեխաներ: Ձինվորական ստորաբաժանումներին թալանի նպատակով հետևում էր ադրբեջանցիների մեծաթիվ խառնամբօխը: Թմրաձեղեր ու ալկոհոլ օգտագործած զինվորականներն ու հատուկ ջոկատայինները ծաղր ու ծանակի, անձի արժանապատվությունը վիրավորող գործողությունների, կողոպուտի զուգորդմամբ հայ բնակիչներից պահանջում էին հեռանալ իրենց մշտական բնակավայրերից, հակառակ դեպքում սպառնալով գնդակահարել բոլորին:

Ստեղծված իրավիճակում Թաթուլ Կրպեյանը կատարում է միակ ճիշտ քայլը, որպեսզի փրկի գյուղացիների կյանքը: Հարմար պահը որսալով նա ցատկում է

<sup>40</sup> Տե՛ս Խեչոյան Օ., Հին հերոսները նրան ծնված օրից էին սպասում, «Մենք, դուք, նրանք», սեպտեմբեր, 2006:

<sup>41</sup> “Московские новости”, 12 мая, 1991.

<sup>42</sup> ՀՀ Ղատախազության արխիվ, 1991թ., թղթ.-կ 83, ք. 63-76, թղթ.-կ 77, ք. 27-66, թղթ.-կ 76, ք. 49-59, թղթ.-կ 80, ք. 60-65, թղթ.-կ 74, ք. 76-80, թղթ.-կ 80, ք. 27-45, թղթ.-կ 76, ք. 49-59:

<sup>43</sup> Նույն տեղում, թղթ.-կ 75, ք. 48-54: Տե՛ձև նաև՝ Заключение комитета Верховного Совета РСФСР по Правам человека..., էջ 13:



գրահամաձայնակի վրա և օձիքից քարշ տալով դուրս հանում 8 հոգու, այդ թվում՝ ավագ լեյտենանտ Ֆեոդորովին: Սպայի օձիքից բռնած, նա սպառնում է պայթեցնել իրեն բանակայինների հետ միասին, եթե չկատարվեն իր բոլոր պահանջները: Կապ հաստատել հրամանատարության հետ, դադարեցնել հարձակումն ու սպանությունները, ՕՍՕՆ-ը հանել գյուղի տարածքից: Ի վերջո Կրպեյանի սպանակախիբների ներքո սպան զինաթափման հրաման է տալիս<sup>44</sup>: Ձինվորականները՝ 9 հոգի և մեկ ադրբեջանցի ուղեկցորդը, նույնպես ենթարկվելով Կրպեյանի պահանջին դուրս են գալիս նաև մյուս գրահամաձայնակից՝ «ավտոմատները դնելով ոտքերի առաջ», հրամանատարին օգնության հասած Արթուր Կարապետյանը, Յրաչ Դանիելյանը, Արշավիր Մելիքյանը և Սմբատ Թաթոսյանը Կրպեյանի բռնագրաված զենքերը վերցնելով՝ տարան, դարսեցին «ամբուլատորիայի պարսպի տակ»<sup>45</sup>: Ձինվորականներին պատանդ վերցնելուց գրեթե մեկ ժամ անց իր պահանջներով ձևակերպված գրուքունը բանակի հրամանատարությանը հանձնելու նպատակով, Կրպեյանը բաց է թողնում ավագ լեյտենանտ Ֆեոդորովին և 2 այլ պատանդ զինվորականների, որոնցից մեկը շարքային Խաջան էր<sup>46</sup>, իսկ պատանդ վերցված մնացած 14 զինվորականներին նրա պահանջով հսկողության տակ թաքցնում են տների նկուղներում:

Գործողության ղեկավարներից գնդապետ Մաշկովը գալիս է գյուղի կենտրոն՝ իրադրությունը ճշտելու: Կրպեյանը սպային հանձնելով Արթուրին՝ մոտեցավ ավտոմեքենային, որտեղ վարորդի տեղում նստած էր Մաշկովը, քաշելով օձիքից, նրան դուրս հանեց ու նռնակը պահեց դիմացը, նրանից պահանջելով դադարեցնել հարձակումը, զորքն ու ՕՍՕՆ-ը հանել գյուղի տարածքից, վերադարձնել պատանդ վերցված գետաչենցիներին և ապահովել բնակչության հետագա անվտանգությունը, խոստանալով իր պահանջները կատարելու դեպքում վերադարձնել պատանդ զինվորականներին: Քիչ անց ստացվում է պատասխան հաղորդումն այն մասին, որ զորքը գյուղից հանելու և կրակը դադարեցնելու հրամանը տրված է<sup>47</sup>: Կրակոցներն առժամանակ դադարեցին գնդապետի հրամանով, մի փոքր անց ՕՍՕՆ-ի առաջխաղացումը դեպի գյուղի կենտրոն նույնպես դադարեցվեց: Ժամը 12-ին մոտ թ. Կրպեյանն ու Յրաչ Դանիելյանը որոշում են դուրս գալ ուղիղ բանակցությունների գործողության ղեկավարների հետ պատանդներին ազատելու և սպանող դադարեցնելու նպատակով: Անձամբ համոզվելու համար, որ տանկերը դուրս են գալիս գյուղից, Կրպեյանը՝ մի ձեռքով գնդապետին թևանցուկ արած, պինդ սեղմած, մյուս ձեռքում՝ օղակը քաշած նռնակով, որն ամեն վայրկյան կարող էր պայթել, Մաշկովին անընդհատ նշանառության տակ պահելով, Յրաչ Դանիելյանի («Ջարգանդ») ուղեկցությամբ, շարժվեցին դեպի կրակի առաջին գիծը: Չնայած խիստ հրամանին՝ չզավ իրենց ետևից, Արթուր Կարապետյանը մի քանի քայլ հեռավորությունից՝ ավտոմատը ձեռքին հետևեց նրանց: Գյուղի նեղիկ փողոցներով անցնելիս՝ նրանց դիմաց դուրս եկան տանկերը և ՕՍՕՆ-ը: Նկատելով նշանառուին՝ Մաշկովը մի պահ գլուխը ետ գցեց, միտումնավոր այդ պահին անպաշտպան թողնելով Թաթուլի գլուխը, նետվեց գետնին ու կրակելու նշան տվեց: Անմիջապես ճարձատեց ավտոմատի կրակահեթոթը, Կրպեյանը ծնկեց, բայց հասցրեց ձեռքի նռնակն իրենից հեռու նետել: Արթուր Կարապետյանի և Յրաչ Դա-

<sup>44</sup> Վ. Զովիանիսյանի հարցազրույցից, հեղ. անձն. արխիվ:

<sup>45</sup> ԶԴ Դատախազության արխիվ, 1991թ., թղթ.-կ 73, ք. 27-33:

<sup>46</sup> Ст'у Заключение комитета Верховного Совета РСФСР по Правам человека..., էջ 14:

<sup>47</sup> ԶԴ Դատախազության արխիվ, 1991թ., թղթ.-կ 73, ք. 27-33:

նիելյանի վրա նույնպես տեղացին ավտոմատային կրակահերթեր<sup>48</sup>: Օնոնականներն ուշքի գալով փախցրեցին Մաշկովին, որը Կրպեյանի ձեռքից պայթած նռնակի բեկորից վիրավորվել էր ոտքից»<sup>49</sup>:

Ժամը 13-ին գործողության հրամանատարությունը նահանջի հրաման արձակեց: Մեծ տրամաչափի գնդացիներից արձակված հրաձգության ուղեկցությանը ՕՍՕՆ-ը և խորհրդային զինվորականներն սկսեցին դուրս գալ գյուղի տարածքից:

Այդ օրերին Յայաստանի իշխանությունները պնդում էին, թե ամեն ինչ արել են Գետաշեն-Մարտունաշենը փրկելու համար: Ապրիլի 30-ին առավոտյան ժամը 12:00-ին զինվորական ուղղաթիռով ՀՀ Գերագույն խորհրդի նախագահի առաջին տեղակալ Բաբկեն Արարքեցյանի գլխավորությամբ պատվիրակությունը՝ այլուր, ադ, ծխախոտ բարձած ուղղաթիռով թռչում են Գետաշեն ճիշտ այն ժամանակ, երբ այդտեղ իրագործվում էր «Օղակ» գործողությունը: Նրանց այցը, ըստ էության, ոչինչ չտվեց: ՀՀ Գերագույն խորհրդի ապրիլի 30-ի փակ նիստի ժամանակ Բաբկեն Արարքեցյանը հեղիեղուկ պատմություն էր պատմում<sup>50</sup>: Այդ հարցի վերաբերյալ խուսափողական և վերացական էր նաև Վազգեն Մանուկյանի ելույթը<sup>51</sup>:

ԼՂԻՄ պարետի տեղակալ, ներքին զորքերի գնդապետ Մաշկովին խուզարկելիս և զինաթափելիս թաթուկ Կրպեյանը հայտնաբերում է ռազմական և պետական նշանակության մի քանի փաստաթղթեր<sup>52</sup>, որոնք համընկնեցին ՀՀ ԳԵ նախագահին. 1991 թ. մայիսի 1-ին գյուղերի վրա ուղղաթիռներից թափված թռուցիկների բնօրինակները, որոնք պահպանվում են ՌՖ պետական դումայի մարդու իրավունքների կոմիտեում, «Օղակ» գործողությանը մասնակից բանակի և ՕՍՕՆ-ի հրամանատարական անձնակազմերի, զինվորական և պաշտոնատար անձանց պայմանականչերի ծածկագիր-աղյուսակը և այլն:

14 պատանդ զինվորականներին ազատ արձակելուց հետո բանակցությունների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածություններից հետո խորհրդային բանակի և ադրբեջանական «միավորված խմբավորման» հրամանատարությունը վերադարձրեց հայկական կողմի 27 պատանդ բնակիչներին՝ խոստացված 29-ի փոխարեն:

Մայիսի 6-7-ին Գետաշենում ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի զինվորականների և Ադրբեջանի ՕՍՕՆ-ի աշխատակիցների կողմից գյուղում մնացած բնակչության շրջանում կրկին կատարվեցին խուզարկություններ և ձերբակալություններ, իսկ մայիսի 1-8-ին Գետաշեն և Մարտունաշեն գյուղերի բնակիչները, նախ կանայք, երեխաները և տարեցները, ռազմական ուղղաթիռներով տեղափոխվեցին Ստեփանակերտ, մեկ շաբաթ անց ինքնաթիռներով և ուղղաթիռներով՝ Իջևան, այնուհետև՝ տղամարդիկ զինվորականների ուղեկցությամբ տեղափոխվեցին Կիրովաբադ, ապա՝ ավտոբուսներով դեպի ՀՀ սահմանը՝ Շամշադինի շրջանի Բերդ ավան: Տեղահանությունն ուղեկցվում էր քաղաքացիների զույքի և ունեցվածքի զանգվածային թալանով, ծեծով, ձերբակալություններով, այլ բռնություններով: Այդ բոլորը կատարվում էր խորհրդային զինվորականների աջքի առաջ: Մայիսի սկզբին, մեկ շաբաթվա ընթացքում Գետաշենի ենթաշրջանում ավելի քան 27 հոգու սպանության, 100-ից ավելի քաղաքացիական անձանց վիրավորվելու փաստերը վկայում

<sup>48</sup> Նույն տեղում, թղթ.-կ 76, թ. 1-7, թղթ.-կ 74, թ. 76-80, թղթ.-կ 83, թ. 34-43:

<sup>49</sup> Տե՛ս Заключение комитета Верховного Совета РСФСР по Правам человека..., էջ 13:

<sup>50</sup> ՀԱԱ, ֆ. 207, ց. 62, գ. 106, թ. 18-20:

<sup>51</sup> Նույն տեղում, թ. 5-6:

<sup>52</sup> ՀՀ Դատախազության արխիվ, 1991 թ., Տեղեկանքներ, թղթապանակ 97, թ. 6:

են «Օղակ» ռազմագործողության բացահայտ ցեղասպանական բնույթի մասին:

**Երկրորդ ենթազվխում «Գետաշենի ենթաշրջանի ինքնապաշտպանության դասերը»**, քննարկվում են ենթաշրջանի անկման պատճառներն ու դասերը, ներկայացվում է միջազգային մամուլի և հասարակայնության արձագանքը ողբերգական իրադարձություններին, տրվում է ինքնապաշտպանության պատմական նշանակության գնահատականը:

«Օղակ» ռազմական գործողության ընթացքում տեղի ունեցած դեպքերն իրենց արտացոլում են գտել միջազգային մի շարք կազմակերպությունների փաստաթղթերում, գնահատվել Եվրախորհրդարանի և ԱՄՆ սենատի բանաձևերում:

Գետաշենի ինքնապաշտպանության պատմական նշանակությունն այն է, որ 1988 թվականից մինչև 1991 թ. ապրիլի վերջն իր վրա վերցնելով թշնամու բոլոր հարվածները, թույլ չտրվեց, որպեսզի թշնամին ներխուժի Արցախ-ԼՂԻՄ, քանի որ գետաշենցիների և Հայաստանից մեկնած մի քանի ջոկատներով կազմակերպված ինքնապաշտպանությամբ փակված էր դեպի Արցախ «դարպասը» □ Իսկ Արցախում այդ ժամանակն արդյունավետ օգտագործվեց պատերազմին պատրաստվելու համար: Գետաշենով անցան և իրենց առաջին մարտական մկրտությունն ստացան բազմաթիվ հերոսներ ու ջոկատներ, որոնք հետագայում դարձան հայոց բանակի հիմքը □

Գետաշենի ենթաշրջանում 1990 թ. սեպտեմբերից Թաթուլ Կրպեյանի և զինակիցների կողմից լուրջ հիմքերի վրա դրված ինքնապաշտպանությունը, չնայած ուշացած, բայց հաջողված կարելի է համարել, իսկ Գետաշենի ենթաշրջանի կորուստը քաղաքական որոշման հետևանք էր: Ինքնապաշտպանական կազմակերպված ուժերը լիակատար հսկողություն հաստատելով Գետաշենի ենթաշրջանում, առանց պետական աջակցության կարողացան դիմադրել ադրբեջանական ՕՍՕՆ-ին, բայց ոչ՝ ԽՍՀՄ կանոնավոր բանակին: Քաղաքական գործիչներից և տեսաբաններից շատերը հանդգնած են, որ «Օղակ» ռազմական գործողությամբ Մ. Գորբաչովը պատժում էր ՀԽՍՀ իշխանություններին համամիութենական հանրաքվեին չմասնակցելու համար:

**Եզրակացություններ** բաժնում ամփոփվում են հետազոտության հիմնական արդյունքները, կատարվում եզրահանգումներ.

1. Ադրբեջանի կողմից տասնամյակներ իրագործվող հայաստաց քաղաքականությունը վերաճեց բացահայտ ցեղասպանական գործողությունների, որը հանգեցրեց տարածաշրջանում ազգային-ազատագրական պայքարի վերելքին, սակայն միայն փոքրաթիվ ուժերով կազմակերպված տեղական ինքնապաշտպանական գործողություններով հնարավոր չէր հաջողությունների հասնել թվական և զինական գերակշռություն ունեցող հակառակորդի դեմ: Ինքնաշեն զենքերով և որսորդական հրացաններով զինված մի քանի կամավորական ջոկատների և աշխարհագրային խմբերի պայքարն ընդդեմ մարտական տեխնիկայի ու զենքի նորագույն տեսակներով սպառազեն կանոնավոր ուժերի, առանց համաժողովրդական համախմբման և պետական աջակցության, հազիվ թե պակվեր հաջողությամբ:

2. Ազգային-ազատագրական պայքարում հաղթանակի հասնելու համար կարևոր է ճկուն քաղաքականության իրագործումը՝ զուգակցված դիվանագիտական համապատասխան քայլերով, որը, սակայն Հյուսիսային Արցախում չնկատվեց: 1991 թվականի գարնանը բոլոր նախադրյալները կային խորհրդային և ադրբեջանական իշխանությունների կողմից հայ ժողովրդի դեմ կազմակերպված «Օղակ» ռազմական գործողությանը դիմակայելու նպատակով համաժո-

ղովրդական պայքար կազմակերպելու համար: Թերևս այդ ճանապարհով հնարավոր լիներ կանխել վերահաս ողբերգությունը: Այս իմաստով տվյալ ժամանակի Հայաստանի պետական իշխանություններն ունեն մեղքի իրենց բաժինը: Մանավանդ, որ Շահումյան-Գետաշենի ինքնապաշտպանական ուժերի ոչնչացման ծրագիրը գոյություն ուներ դեռևս 1989 թվականից:

3. Օրեցօր թափ առնող հայ-ադրբեջանական հակամարտությունը ցույց տվեց, որ Ադրբեջանի հետ խաղաղությամբ համաձայնության հասնելն անհնար է: Առանձին նախաձեռնությունների շնորհիվ կազմակերպվեցին հարյուրավոր կամավորական ջոկատներ, որոնք պաշտպանում էին սահմանները, մեկնում Արցախ, Շահումյան, Գետաշեն: Անհրաժեշտ էր այդ բոլոր ուժերը համակարգել և անհրաժեշտության դեպքում արագ արձագանքման նպատակով կենտրոնացնել առավել վտանգավոր կետերում:

4. Գետաշեն-Շահումյանի պաշտպանությունը հաղթանակով կպսակվեր, եթե պետականորեն մշակվեր ինքնապաշտպանության հստակ ռազմավարություն: Չհայտարարված դիրքային պատերազմի պայմաններում հնարավոր էր կազմակերպել համաժողովրդական համախմբում և պայքար, նախապես կանանց, երեխաների և ծերերի տարահանում լարվածության գոտուց: Այդ դեպքում կամավորական ուժերն ազատ գործելու հնարավորություն կունենային: Եթե Թաթուլ Կրպեյանը և նրա զինակիցները՝ չլինելով ռազմական մասնագետներ, կարողացան սուղ միջոցներով 8 ամիս դիմակայել հակառակորդին, իսկ վճռորոշ պահին ցուցաբերելով մեծ խիզախություն, հմտություններ և նվիրվածություն՝ սպանդից փրկեցին 3500 մարդու, ապա պետական իշխանությունները պետք է զոնե սատար կանգնեին ինքնապաշտպանական ուժերին՝ տեղում նախապես որոշակի ռազմական ուժ և մասնագետներ կենտրոնացնելով:

5. Հյուսիսային Արցախում հակահայկական ագրեսիայի և մարդկային ողբերգության ծավալները ստիպեցին զգաստանալ նաև պետական իշխանության ղեկին կանգնած անձանց՝ մղելով գործուն քայլեր ձեռնարկել բանակային շինարարության և պետական անվտանգության ու ազգային պաշտպանունակության բարձրացման ուղղությամբ:

6. Մարդու իրավունքների և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքների կոպիտ խախտումների դեպքերում գոյություն ունեցող միջազգային կանոնների համաձայն Գետաշենի ենթաշրջանում իրականացված բարբարոսության համար պետք է պատասխանատվության ենթարկվեին խորհրդային կայսրապետության և Ադրբեջանի իշխող պարագլուխները, որոնք հանդիսանում են «Օղակ» գործողության անմիջական կազմակերպիչներն ու կատարողները: Սակայն ռազմական գործողության ընթացքում թույլ տրված հանցագործությունների մեղավորները մնացին անպատիժ, որը նախադեպ դարձավ, որպեսզի Ադրբեջանը շարունակի իրականացնել նոր ռազմական հանցագործություններ հայազգի բնակչության նկատմամբ:

7. Առ այսօր բռնությամբ իրենց բնօրրանից տեղահանված բնակիչները զրկված են սեփական տները վերադառնալու հնարավորությունից: Ավելին՝ «Օղակ» գործողության ընթացքում բռնի տեղահանված հայկական գյուղերից ոչ մեկը չի հիշատակվում դարաբաղա-ադրբեջանական հակամարտության կարգավորման համար միջազգային դիտորդների կողմից առաջարկվող որևէ փաստաթղթում:

8. 1988-1991 թթ. մայիս ընկած ժամանակահատվածում Հյուսիսային Արցախի Գետաշենի ենթաշրջանում ծավալված ինքնապաշտպանական մարտերը կարևոր նշանակություն ունեցան ազգային-ազատագրական պայքարի զինված փուլին

բարոյահոգեբանորեն և ժամանակ շահելու առումով նախապատրաստվելու գործում:

**Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**

1. Բարսեղյան Ի., «Օղակ» ռազմական գործողության պետական-ախաբեկչական բնույթը, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», «Գիտություն», Երևան, 2013, թիվ 3, էջ 83-92:

2. Բարսեղյան Ի., Միջազգային հասարակայնության և լրատվամիջոցների արձագանքը «Օղակ» ռազմագործողությանը, Հայոց պատմության հարցեր, Գիտ. հոդվածների ժողովածու, Երևան, 2012, թիվ 13, էջ 305-317:

3. Բարսեղյան Ի., Թաթուլ Կրպեյանը և «Օղակ» գործողությունը, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», «Գիտություն», Երևան, 2011, թիվ 3, էջ 41-54:

## БАРСЕГЯН ИРИНА ВОЛОДЯЕВНА

### САМООБОРОНИТЕЛЬНЫЕ БОИ В ГЕТАШЕНСКОМ ПОДРАЙОНЕ СЕВЕРНОГО АРЦАХА (1988-май 1991гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01. “История Армении”

Защита состоится 19-го мая 2015 г., в 14<sup>00</sup> на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

#### РЕЗЮМЕ

1. Антиармянская политика, проводимая Азербайджаном на протяжении десятилетий, переросла в откровенный геноцид, что вызвало подъем национально-освободительной борьбы в регионе, однако немногочисленными силами местной самообороны невозможно было достичь численного и военного превосходства над противником. Борьба отдельных добровольческих отрядов, вооруженных самодельным оружием и охотничьими ружьями, а также ополченческих групп с регулярными силами, имевшими все виды боевой техники и новейшего оружия, вряд ли увенчалась бы успехом без всенародного сплочения и государственной поддержки.

2. Для победного завершения национально-освободительной борьбы необходимо проводить гибкую политику, прибегая к соответствующим дипломатическим действиям, чего не наблюдалось в Северном Арцахе. Весной 1991 г. имелись все предпосылки для организации всенародной борьбы с целью противостояния военным действиям операции „Кольцо”, которая была инициирована советскими и азербайджанскими властями. Пожалуй, таким путем можно было предотвратить надвигающуюся трагедию. В свете сказанного в этом вопросе властные структуры Армении имели свою долю вины, тем более, что программа по уничтожению сил самообороны Шаумяна-Геташена была разработана еще в 1989 г.

3. Набиравший силу армяно-азербайджанский конфликт явствовал о том, что с Азербайджаном невозможно прийти к мирному соглашению. Благодаря отдельным инициативам были созданы сотни добровольческих отрядов, которые защищали границы, отправлялись в Арцах, Шаумян, Геташен. Следовало координировать эти силы и в случае необходимости сосредоточить их в наиболее опасных точках.

4. Оборона Геташена-Шаумяна могла увенчаться успехом, если бы на государственном уровне была разработана четкая стратегия самообороны. В условиях необъявленной войны организация борьбы с предварительной эвакуацией женщин, детей и стариков из зоны конфликта была вполне возможной. В таком случае добровольческие силы могли действовать свободно. Если Татул Крпеян и его соратники, не будучи военными специалистами, сумели при наличии минимальных средств на протяжении 8 месяцев

оказывать сопротивление притивнику, а в решающий момент, проявив огромное мужество, навыки и преданность, спасти от бойни 3500 человек, то властные структуры должны были хотя бы поддержать силы самообороны, сосредоточить на месте определенные военные силы и подключить специалистов.

5. Масштабы антиармянской агрессии и человеческой трагедии в Северном Арцахе вынудили власть имущих предпринять действенные меры по созданию армии, обеспечению государственной безопасности и повышению национальной обороноспособности.

6. Согласно существующим международным нормам по вопросам грубого нарушения прав человека и принципов самоопределения, за варварские действия, учиненные в Геташенском подрайоне, должны были быть привлечены к ответственности руководящие лица советского государства и Азербайджана, являвшиеся как непосредственными организаторами, так и исполнителями операции „Кольцо“. Однако виновники преступлений, совершенных при проведении этой операции, остались ненаказанными, что явилось прецедентом для того, чтобы Азербайджан продолжил цепь военных преступлений против армянского населения.

7. По сей день насильно выселенные из родных очагов жители лишены возможности вернуться в свои дома. Более того, при проведении операции „Кольцо“ ни одна из деревень, жители которых были насильно выселены, не упоминается в каких-либо документах, предложенных международными наблюдателями для урегулирования азербайджано-карабахского конфликта.

8. Самооборонительные бои в Геташенском подрайоне Северного Арцаха (1988-май 1991 г.) имели важное морально-психологическое значение в вопросе подготовки вооруженного этапа национально-освободительной борьбы, а также в том, чтобы выиграть время.

**(1988-1991 may)**

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of  
"History of Armenia" 07.00.01.

The defense of the dissertation will be held on May 19, 2015, 14<sup>00</sup> at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave. 24/4).

### **Summary**

In the summary main results of the investigation are generalized, conclusions are made.

1. The politics of hatred of Armenians that had been realized over years by Azerbaijan turned to obvious genocide actions that lead to the rise of national liberation war at the region. But it is worth to mention, that by that little liberation actions, which were organized only by local forces, it was impossible to get success over the enemy, that had numeric and military advantage. Units of volunteers and groups of citizen soldiers armed by homemade weapons and shotguns against regular forces, which had defense technology and new types of arming, would had no success, but for national unity and state assistance.

2. In order to get success in national liberation war, flexible policy adjoin with corresponding diplomatic steps was necessary, which had not been realized at North Artsakh. In spring of 1991 there were all the pre-conditions to organize national struggle against military action "Ring", which was organized by soviet and Azerbaijani authorities against Armenians. In this way, may be, it would be possible to prevent coming tragedy. From this point of view Armenian authorities of that time had their fault, especially when we take into account the fact that destruction plan of Shaumyan-Getashen self-defense forces existed from 1989 year.

3. Armenian-Azerbaijani conflict had shown that to get agreement with Azerbaijan in peaceful way was impossible. Hundreds of volunteer units had been organized by separate initiatives. These units defended borders, went to Artsakh, Shaumyan. It was necessary to coordinate them and by necessity to concentrate in more dangerous places for the aim of quick reaction.

4. The Getashen-Shaumyan defense would have been ended successfully, if the accurate state strategy of self-defense had been worked out. In case of undeclared trench warfare, it was possible to organize national unity and strike, evacuating beforehand women, children and old men from military zone. In this case volunteer forces had a chance to act freely. If Tatul Krpeyan and his team-mates, without being military specialists, could confront the enemy during 8 months and could save 3500 people from slaughter in a critical moment, displaying great brevity, skills and devotion, then the state authorities must have to help self-defuse forces, by coordinating in place some specialists and military forces.

5. Volumes of anti-Armenian aggression and human tragedy at North Artsakh obliged state authorities to take operating measures in order to build an army and to secure national security and defense.



6. Due to international regulations about gross violation of human rights and principles of nations' self-determination, the responsibility for the barbarism realized at sub-region of Getashen, must carry those representatives of soviet and Azerbaijanian authorities, who considered to be the organizers and executers of action "Ring". But the organizers of crime left unpunished. This became a precedent, for Azerbaijan to continue its military crimes against Armenian nation.

7. Till now, people moved from their homelands, had no chance to return there. More than it "no village evacuated during military action "Ring" is not spoken about in documents, which are introduced by international observers, in order to solve Karabakh-Azerbaijani conflict.

8. Self-defense actions, deployed in 1988-1991 at sub-region Getashen of North Artsakh, had an important meaning for psychological and time preparation of armed phase of national liberating war.